

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկա 12 Թ. Թ. Թ.
Վեցամսեայ 6 Թ.

ԱՐՏԱՍՈՇՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան 14 Թ.


Վեցամսեայ 7 Թ.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրար
Վեցամսեայ 1.50 Թ.

ԿԱՆԻՆԻԿ

Ծանոցման տողը
20 տարեկան



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՎՇԱՐԹ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

, Ir. youn."

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравунк"

ВАРНА

Գրութիւնք եւ լեւ
տրոշիր

ՄԻԱԿ ՓՐԿԱՐԱՐ ԶԱՄԲԱՆ

Ներկայիս գոյ եղող Հայ յեղ. կազմակերպութեան միութեան կամ համերաշխ գործակցութեան կարեւոր հարցը՝ անցեալ չորս, հինգ տարիներու ընթացքին մէջ՝ արտասահմանի հայ մամուլին մէկ մասէն եւ շատ անգամ ալ բեմերէ վիճաբանութեամբ ու լուսաբանութեամբ է թէն, սակայն, դժբաղդաբար, արդիւնք ունեցած չէ, յիշեալ կազմակերպութեանց բացարձակ չկամութեան պատճառաւ, այնպէս որ՝ այդ հարցին նորէն հրապարակ բերելը՝ ունեց համար աւելորդ բան մը համարուի թերեւս:

Եթէ այդ հարցը՝ ու եւ է ատեն կարեւոր եղած է՝ Հայ դատին յաջողութեան համար, հիմա կարեւորագոյնն է վաղուան վնասակար վայրկեանին ըմբռնումով:

Արտասահմանի յեղ. թերթերուն՝ Հայ ժողովուրդին ըրած կոչերուն գոտում, գոչումները՝ ակամօ խլացնելու աստիճան մեծ են, — «վճռական վայրկեանը մօտէ, շտապեցէ՛ք յեղ. քաջերուն օգնութեան հասնիլ, յետոյ զղջալը անօգնէտ է» եւն, կըսեն եւ կը գրեն, բայց գոնէ վայրկեան մը լրջօրէն չեն խորհիլ թէ իրենց այս բարձրագոյն գիտնականներուն լուրջ պատասխան մը ինչպէս կարելի է ըստանալ: Պարտաւոր չեն ըմբռնելու թէ ժողովուրդը իրաւունք ունի մտաբերելու, թէ այս երեք—Դաշ. Նոր Հնչ. եւ Հին Հնչակեան—կազմակերպութիւններն ալ ուրոյն, ուրոյն նոյն գիտնականները կըսեն, միեւնոյն կոչերը կը բարձրացնեն, ամէնուն նպատակը մէկ է եւ ամէնքն ալ հայրենիքին քիչ շատ բարեկեցիկ վիճակ մը ապահովելու համար պիտի կոտորեն, բայց ինչո՞ւ ասոնք անցեալ ութ տարու տարւածն ընթացքին մէջ չկրցան իրարու հետ գոնէ կոտորի դաշտին վրայ—համերաշխելու կն պ մը գտնել, եւ հիմա ալ որ «վճռական վայրկեանը մօտէ» կըսեն այդ վայրկեանին չեն պատրաստուիր միացեալ եւ խտացեալ ոյժերով:

Միթէ ասոնք Հայաստանի երեք մասերուն վրայ զատ զատ կոտորի դրօշը պիտի բարձրացնեն եւ զայն պիտի փրկեն երեք կողմէն յարձակում գործելով թշնամութեան վրայ: Միթէ այնչափ շատ է ոյժերին որ հարկ տեսած են զանոնք երեք մասերու զստնել եւ այսպէս թուրքը երեք կետերու վրայ զրազեցնել միեւնոյն ժամանակ ռազմական «թագթիկ» իգործ դրնելով:

Բայց ակներեւ եւ անսովոր իրա-

կանութիւնը բացասական պատասխանը կուտայ ամէն դատակարար Հայերուն:

1. Թէ՛ Հայ յեղ. կազմակերպութիւնները համերաշխութիւն մը չունին միմեանց հետ եւ թէ ամէն մէկը յանուն իր կուսակցութեան պիտի գործէ եւ կոտորի, եթէ կրնայ իր շարժումները ու գործողութիւնները բացարձակապէս զաղտնի պահելով քոյր կուսակցութեանէն, եւ որ ամէնէն սոսկալի է, իրարու դէմ այնպիսի սուր կերպով լարուած են որ մէկուն չիտածը միւսը կը քակէ: «Հայրենիք»ի պարոն խմբագրը կը պնդէր, թէ երկրի մէջ կոտորուիներ համերաշխ են: Հարկաւ Դաշ. ընկերները իրարու հետ համերաշխ են, բայց ամէն յեղափոխական միթէ երկրին մէջ Դաշակեցակա՞ն է, եթէ միւսներն ալ մարդիկ ունին, աւելորդ համերաշխ չեն դաշակեցակեանց հետ, ինչպէս փաստերը կ'ապացուցանեն: Եւ կամ թէ երկրի ըսելով Ս. . . եւ իր շրջակայքը կը հասկցուի միայն:

2. Թէ ոյժերին եւ պատրաստութիւնին շատ անհասն է՝ պահանջին մեծութեանը հետ բաղդատելով: Կուսորաժներն ի վեր ութ տարիներ անցիլ են, ժամանակամիջոց մը՝ բաւական երկար՝ ուր հայ յեղափոխութիւնը պատրաստուելու եր վճռական կոխիլն, բայց գործի պահանջած պատրաստութիւնը տեսնուած չէ, ութ տարիներ անցիլ, գացիլ են միայն ներքին կոտորուած, զերար ամբաստանելով եւ իրարու վրայ անարդարութիւններ թափելով: Հին Հնչակեաններու անակոթիւնը արդէն պարզուեցաւ: Միմեանք իրենց վերջին քստմեղի արարքներով, Նոր Հնչակեաններու դէպի միութիւն ջանքերը հիշելով, դաւադրութեան ծրարութեանը իսկ Դաշակեցակեաններն ալ այն լուրջ ու պահանջուած պատրաստութիւնը չկրցան ունենալ՝ զոր իրենք ալ կը խոստովանին: Նախ՝ որ ատեն ատեն՝ իրենց խումբերը, քերտերու եւ թուրքերու հետ ընդհանրութեան ունենալով սպառնցելու իրենց արդէն մեծ չեղած ոյժը. եւ երկրորդ՝ որ իրենք չկրցան ժողովուրդին բաւոր համակրանքը եւ ուղարկութիւնը իրենց կողմը շահիլ: Ղի հնչակեանութիւնը՝ իր իրենց մերցակից, արգելք էր իրենց այդ լիմա լաջողութեան տիրանալու:

Ուրեմն ճշմարտութիւնը բացայայտ խօսելով՝ ասոնցմէ ոչ մէկը գործի գլուխ հանելու եւ գոնէ վեց ամիս շարունակ զիմադրելու կարող է՝ թշնամի մը որ անհունօրէն գերազանց է նիւթական ամէն առաւելութիւններով:

Ենթադրենք, թէ անցմէ մինչայս ինչ կէտին վրայ հազար հոգի զի-

նած է, (ատկէ ա. ելին ընելու ոյժ չունի արդէն, ինչպէս ըսինք) այդ քանի մը հարիւր հոգին եթէ համակոտոր, սուր եւ հրացան ըլլան, տակաւին չեն կրնար բաւել թուրք, քերտ խուժանին եւ կայս. զօրքերուն, որք մեղուներու պէս պիտի պաշարեն զիրենք: Թերեւս քանի մը քերտ եւ թիւրք սպաննեն, բայց ետքը՝ պաշարին անհատնում է, օղապարիկով օգնութեան պիտի փութան ուրիշ ընկերներ: Զէ՛, օղին մէջ գլխակ չընենք: Վերջապէս կամ անձնատուր պիտի ըլլան եւ կամ ամէնքն ալ պիտի ինչան թշնամին քնդակնելն:

Մակեդոնացիները տարիէն աւելի թիւրք բանակներու հետ հերոսաբար կոտորելէ ետքը դեռ իրենց նպատակին չհասած՝ կը պատրաստուին զարուհի նորէն վերաբանալ ընդհատուած անհատար կոտոր: Բայց մենք ինչպէ՞ս միամիտ կը գտնուինք դեռ հաւատարմութիւն մը հրացան պարպիլ եւ քանի մը քերտ սպաննելէ ետքը Եւրոպան պիտի ստիպենք միջամտելու եւ մեր արդար պահանջները զրոծադրելու:

Ննցեալ փորձառութիւնը եւ ուղիղ զատողութիւնը եզրակացնել կուտան մեզի, ուրեմն, թէ միայն փրկարար ճանքն է Հայ յեղ. կազմակերպութեանց եղբայրական Միութիւնը ու ցիր եւ ցան ոյժերու միատեղ համախմբումն է որ նպաստիլի պիտի ծառայէ. ուրիշ հնար չկայ:

Ներկայ տարաւմ եւ անստույգ վիճակն յեղափոխութիւնը հանել պէտք է, եւ հայ ժողովուրդն ալ: Յեղ. կազմակերպութեանց վրայ կը ծանրանայ պատասխանատուութիւնը՝ իրենց այս ամէկ եւ կաղնի կաղ քաւումը քին եւ հայ ժողովուրդին վարանութ եւ դաճող վերաբերմունքին դէպ ի յեղափոխական գործը:

Տարիներէ ի վեր է որ հայ յեղ. անիւր ճամբուն վրայ գրուած է, այդ անիւր ազգին մէջէն յեղափոխական անուամբ դուրս եկած անձեր յանձն առած են վարկուտ, այս ընելու ատենն մէկ մասը ալ միւս մասը ձախ եւ ուրիշ միւր ետ կը քաշեն եւ այս պէս անիւր իր տեղը կը մնայ ժողովուրդը պիտի օգնէ անոր յառաջ խաղալու եւ մեծ անձկանօք կ'սպասէ, բայց ցաւով կը տեսնէ որ զայն յառաջ մղելու կոչումն ունեցող յեղափոխականները անոր յառաջ երթալուն արգելք կըլլան՝ մէկ մէկը մէկ կողմ քաշելով ուստի ժողովուրդը շուարած եւ վնասած ձեռնպահ կը մնայ: Այս պարագային յեղափոխականները զո՞վ դատապարտեն աղէկ. — ժողովուրդը՝ ըսելով՝ «դուք անպարտաճանապարհ եք»:

նաչ էք, այս բոլոր յացանքը ձերն է որ յեղափոխական անիւր յառաջ չը քաշէր: Մինչդեռ պէտք էր ինքզինքնին դատապարտէին հազար անգամէ աւելի, վասնոր քուն իրենց են ներկայ անշարժութեան պատճառը:

Պէտք է որ այս ճշմարտութիւնը յեղ. ղեկավարող մարմինները ըմբռնած ըլլային. եթէ դեռ չեն ուղեր ըմբռնել, պէտք է որ հայ ժողովուրդը բանադատէ զանոնք ըմբռնելու: Աղերսանքի եւ խնդրանքի ժամանակն անցած է, եթէ տասնեակնեկ տարիներէ ի վեր յեղափ. կազմակերպութիւնները այդ խնդրը չուղեցին լուծել իրենց յօժարութեամբ, պէտք է որ հայ ժողովուրդը կոտորել եւ կոտորի ընթացքով մը փութացնէ ասոր լուծումը:

Հայ ժողովուրդը շատ շուտ կ'ընայ իր նպատակին հասնիլ՝ սա կորուզ ճամբով—անոնց՝ որոնք միութեան արգելք կըլլան, հրապարակային ժողովներուն բնաւ չի յաճախէ, թերթերին չի գնէ ու չկարդայ եւ յեղափոխութեան անուանով իրենց հանգանակութիւններուն մէկ սէնթ չտայ: Մինչեւ որ պիտան թէ միմեկ միացած են, եւ այն ատեն պիտի ստիպուին անհրաւրելան առկա խոնարհիլ, եթէ անկեղծ հայրենասէրներ են, պիտի ըմբռնեն իրենց պարտականութիւնը եւ ամեն գոհողութեանց յանձնառու պիտի ըլլան բացձայնութեամբ համերաշխութիւնը գործնականացնելու: Եթէ չեն՝ պիտի քանդուին ու անհետանան:

Հայ յեղ. կազմակերպութեանց համերաշխ գործակցութեան մը օգուտները անհուն են, որոնցմէ մէկ քանիները հետեւեալներն են:

- 1.— Յերոցան ոյժերու ի մի խտացումը:
 - 2.— Դրամական հազարաւոր տոլարներու խնայողութիւնը գործիքակութիւն թերու, ժողովներու եւ գործիչներու համար ծախսուածներէն:
 - 3.— Հայ յեղափոխութեան բարոյապէս պատկառելի դիրք մը գրաւելը:
 - 4.— Հայ ժողովուրդին անոր շուրջը միահամուռ խոնարհելը՝ դրական ձեռնդրութեամբ:
 - 5.— Երկպառակութիւններու, ամբաստանութիւններու եւ անվստահան կոտորուելու իսպառ անհետացումը:
 - 6.— Անարժան եւ չհամարու անձանց ասպարէզէն քաշուիլը:
 - 7.— Վճռական կոտորի համար չափուած, հաշուուած եւ հանճարեղ բըօ լաններ:
- Ս.հա Միակ փրկարար ճանքն է՝ զոր եթէ հայ յեղափոխութիւնը անգամ մըն ալ չուղէ ըմբռնել, պիտի կորսնցնէ ոսկեղէն պատահութիւնը՝ մօտ ապագային մէջ՝ տոկուն ապստամբութեամբ:

մը՝ հայ դատին վերջնական լուծումը ապահովելու, եւ հետեւագէտ պատասխանատու պիտի մնայ գալիք դժբաղդ սերունդներու առջեւ։

Ս. Մ. Յովսէփեան

ՍՈՍՆՈՑ ԵՒ ՄԵՈՑ ՎԻՃԱԿԸ

Քանի մը շաբաթէ ի վեր յաջորդաբար եւրոպական թերթերու հաղորդումած լուրերը Սասնոյ և Մուշի գաւառներուն վիճակը խիստ ծանր ցոյց կուտան, Հոնանի կոտորածը արդէն դառն իրողութիւն մըն է։ Մարտ 9 թուով Պոլսէն ստացուած հեռագիր մը կիմացնէր թէ «Սասնոյ մէջ Հայերը և քիւրտները շարժման մէջ են, Բաղէշէն և Վանէն 7 վաշտ զօրք զրկուած է Սասուն, հետեւաբար աւերումը կամ կոտորածը անխուսափելի կը նշկատուի»։ Մշոյ առաջնորդարանը և ժողովը ուղղակի Սուլթանին հեռագրով դիմելէ զատ, Պատրիարքարանէն ալ խնդրած էին որ ամեն ջանք ի գործ դնէ նոր կոտորածի մը առջեւն առնելու համար։ Այս հարկէն մուծած Օրմանեան, երկու օրը անգամ մը Երլարդ, Բ. Դուռը, արդարութեան և պատերազմական նախարարներուն կը դիմէր. այս վերջինը Օրմանեանէ խնդրեր էր որ իր ազգեցութիւնը ի գործ դնէ այդ գաւառներու հայերը հանդարտեցնելու համար։ Օրմանեան պատասխանած է կըսէ, «Թրանդօք Յայթունկ», թէ ինք այդ տեսակէտէ ունէ ազգեցութիւն չունի, սրովհետեւ տարիներէ ի վեր կառավարութիւնը ամէն ինչ ըրաւ որ իր այդ ազգեցութիւնը կոտորի։

Բայց թուրք կառավարութիւնը Օրմանեանի այդ պատճառաւորութիւնով չի գոհացաւ ու վերջապէս ստիպեց որ Հայերը հաւատարմութեան յորդորով չըջարեալանան որ ուղղէ մէկ քանի գաւառներ։ Իբր թէ այդ գաւառներու հայ բնակչութիւնը ըլլայ խռովութիւն յարուցանողը Օրմանեան համակերպեցաւ և ըրաւ այն ինչ որ իրմէ պահանջուեցաւ։

Իսկ ինքնապաշտպանութեան համար Սասնոյ անառիկ տեղերը քաշուող մաս մը հայեր, որոնց հետ խուճը մը յեղափոխականներ, այսօր կը մնան իրենց գիրդերուն վրայ պաշարուած քիւրտերէ և զինուորներէ, մինչդեռ գիւղերը կը հաւստահարուին ու կը կողոպտուին պաշարողներէն։ հետեւաբար թէ՛ Սասնոյ և թէ՛ Մշոյ գաշտի գիւղերուն այժմու վիճակը շատ ողբալի է, ցորչափ պաշարող զօրքերը և ֆիւրտերը իրենց տեղերը չը վերադառնան։

Վերջին լուրին համեմատ, զոր հաղորդած էինք մեր նա-

խորդ թուով, այժմ լեռը ապաստանող ինքնապաշտպան Հայերու և թուրք կառավարութեան միջեւ բանակցութեան մը միջնորդի գերը յանձնուած է Մուշի Հայոց առաջնորդարանին։ Եւ միեւնոյն ատեն Դուռը խոստացած է Պատրիարքին՝ մինչեւ բանակցութեանց վախճանը ապստամբ հայերուն դէմ զինուորական գործողութիւն չը կատարել և ֆիւրտերու անկարգութիւնը արգելել։

Բայց Դրան այդ խոստումը երբեք չէ կարող արգելել որ Սասուն համախմբուած զօրքը եւ ֆիւրտերը մասնակի սպաննութիւն, գողութիւն, բռնաբարութիւն և ամէն կարգի հարստահարութիւններ ի գործ չը դնեն։ հետեւաբար այդ բանակցութիւնը որչափ երկար տեւէ, շրջակայ գիւղերու և գաւառակներու հայերը այնչափ աւելի պիտի տառապին։

Իսկ բանակցութեան հետեւանքին գալով, չենք կարծեր որ Հայոց նպատաւոր պայմաններու յանգի, քանի որ թուրք կառավարութիւնը գիտէ թէ միայն ափ մը Հայերու հետ է իր գործը, զոր հակառակ պարագային կրնայ քանի մը վաշտ զօրքի միջոցաւ ի դուռս հանել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպական օրաթերթի մը Պոլսոյ թղթակցին մարտ 8 թուով գրած մէկ ընդարձակ նամակին համառոտագրութիւնը։

«Մակեդոնիոյ ոստիկանական կազմակերպութեան համար եւրոպական զինուորական յանձնախումբին գծած ծրագիրը երկու գլխաւոր կէտերու մէջ Դրան անընդունելի թուեցաւ։ Նախ Դուռը ուղեց որ իտալացի ոստիկանական ընդհ. հրամանատարը պաշտօնեաներ անուանելու և պաշտօնանկ ընելու իրաւունքը թուրք հրամանատարներու հաճութեան ենթարկելու պարտաւոր ըլլայ. երկրորդ՝ Դուռը միայն 20 սպայ և այնչափ ալ ենթասպայ օտարահպատակ պաշտօնի կոչել ուղեց, մինչդեռ պետութեանց ներկայացուցիչները այս թիւին կրկինը պահանջեցին։ Բայց անոնք չը կրցին որոշել տակաւին թէ այդ սպաներէն քանեկան հատ պիտի տայ իւրաքանչիւր պետութիւն, Այս թիւն ալ ճշգրիտ համար չըջանակներու բաժանումը նախ պէտք է ճշգրտել։ Վերջապէս Դրան վերի երկու առարկութիւնները առիթ տուին որ Ռուսիոյ և Աւստրիոյ գեւապանները խիստ նօթայով մը անոր զեկուցանեն թէ Եւրոպական Գովիսիտին առաջարկները նոյնութեամբ պարտի ընդունիլ։

Սակայն շրջանակներու բաժանման հարցը ծանրապէս զբաղեցուցած է եւրոպական դահլիքները։ Յանձնախումբը երեք շաբաթներ 17 նիստեր ըրաւ, որոնց մասնակցեցան գեւապանատանց զինուորական կցորդներն ալ, ու որոշումի մը չը հասաւ. եւ դեռ կը թուի թէ այդ խնդիրը երկար տեւէ, որովհետեւ մակեդոնական գործին էն կարեւոր կէտն է այդ։ Յանձնախումբին քանի մը անգամայ խոստովանութեամբ իսկ, քանի մը պետութեանց ներկայացուցիչները իրենց յատկացուելիք շրջանակի մասին այն աստիճան մեծ շահագրգռութեամբ կը վերաբերուին որ՝ ալլ եւս ոչ մէկ կասկած չը մնար թէ շրջանակի ընտրութեամբ անոնք նպատակ ունին հոն իրենց պետութեան ազգեցութիւնը տիրող հանդիսացնել։ Այս նպատակը ցոյց տուող պետութեանց մէջ առաջին տեղը կը բռնէ Աւստրիան, իր հետը ունենալով իր գաշնակից Գերմանիան, երկրորդն է Իտալիան, որ առաջին հակառակորդն է Ալպանիոյ խնդրոյ մասին, և վերջապէս Ռուսիան։

Աւստրիան առաջին օրէն պահանջեց որ իր սպաները Գոսովա նահանգին մէջ գործեն. այդ նահանգը իր աշխարհագրական դիրքով՝ Աւստրիոյ քաղաքականութեան տեսակէտով անոր շատ առաւելութիւններ կընծայէ։ Այս պատճառաւ միւս պետութեանց ներկայացուցիչները պաղ կերպով ընդունեցին Աւստրիոյ այս առաջարկը. նոյնպէս Սերպ գիւնանադէտները նոյն առաջարկը մերժեցնելու համար միւս պետութեանց դահլիճներուն դիմումներ ըրին, ցոյց տալով թէ Սերպիա մեծ շփոթութեանց կենթարկուի, և իրաւ ալ Գոսովայի նահանգին մէջ Սերպերու կամ Սլաւներու բռնապետութեան արգելքներու կը հանդիպի աւստրիացի սպաներէ։ Վերջապէս այդ նահանգի սլաւները գեղեցիկութիւն կը յայտնեն այժմէն, բայց չը գիտցուիր թէ կշիռ պիտի ունենայ անոնց դժգոհութիւնը։ Միեւնոյն ատեն Օսմ. կառավարութիւնն ալ վըտանգաւոր կը տեսնէ Աւստրիոյ հաւակնութիւնները, որոնք թուրքիոյ ներկայ սպառազինման պատճառ ըլլալ կը կարծուին, երբ ասդին Պուլկարիան խաղաղասիրութեան վստահացումներ կուտայ։

Ի մի բառ, թուրքիոյ կառավարական բարձր շրջանակներու մէջ յայտնի կը խօսուի թէ Աւստրիոյ հետ «չափուիլ» որոշուած է հակառակ պարագային։ Շատ հաւանական կը թուի երբեմն գիւնանադիտական շրջանակներու մէջ թէ Աւստրիան գրաւէ Կով-

Բագարը, որ Գարատաղի իշխանապետութիւնը Սերպիայէ բաժնող երկիրն է։

Իտալիոյ ներկայացուցիչները Բարկութիւն զգալով Աւստրիոյ հաւակնութեան մասին, որ իրենց Ալպանիոյ համար սնուցած յոյսերը կը նսեմացնէ, պահանջեցին անոնք ալ Մանասթըրը նահանգին ամբողջ հոկայութիւնը իրենց սպաններուն յանձնել. որ քանի մը ալպանական կեդրոններ գտնուելով, կրնայ զիրենք բուն Ալպանիոյ հետ ալ յարաբերութեան մէջ դնել։

Ռուսները ոչ Աւստրիացուց և ոչ ալ Իտալացուց ձգտումներուն կը հակառակին, և միայն կը պահանջեն որ իրենց սպաները Սելանիլի նահանգին մէջ պաշտօն ստանան, հոգ չէ որ քանի մը շրջանակ ալ Ֆրանսացի և Անգլիացի սպաներու յատկանայնոյն նահանգէն։ Իսկ Գերմանիա չուզի սպաներ զրկել իր կողմէ, չունենալով ոչ մէկ ձգտում Մակեդոնիոյ համար. ալ կուզէ ըստ իւր աւանդական ծրագրին, որ Աւստրիա մինչեւ Սելանիլի յառաջանայ, որպէս զի ինքն ալ օր մը Թրիեստի կողմէն Միջերկրական ծովը իջնէ։

Ոստիկանները փոխանակ ֆէսի պիտի կրեն գալլագներ, թուրք թնդանթաճիկներուն պէս։

ՆԱՄԱԿ ԽՄԻԱԳՐՈՒԹԵԱՆ

Տէր.

«Իրաւունք» ի նախնիքաց չարաթ օրուան ազգային լուրերու բաժնին մէջ կարդացի խմբագրութեանց կողմէ եղած գիտողութիւնները հին թաղականութեան հաշուական խնդիրներու նկատմամբ։

Սրդարեւ Տիար Մամեանի եւ Տիար Սուքիսեանի թաղականութեան օրով իրենք քարաւորող պաշտօնավարած եմ, սակայն իրենց ծանօթ տեսրակին մէջ արձանագրուած 1118 ֆր. 35 սնդ. կլորիկ գումարն երբեք ինձ չէ յանձնուած։

Թէպէտեւ, նոյն խորհուրդը իր գործունէութեան շրջանէն սկսեալ մինչեւ հրաժարումը մէկ քանի ջարտուղարներ ունեցած է. արդեօք անոնցմէ ուրիշ յանձնուած է, թող բարեհաճ յակնէ անուանէ հրապարակել ոչ թէ՛ Օսմանցիներու պէս «քեթիպ» ով մը անցիլ խնդիրն վրայն։

Սիրաֆ Մարգարեան

16 Մարտ 904

Վառնա

ՊԱՇՏՏՈՒԱԿԱՆ ԱԶԴ

(օ)

Թուականէս իբր 3 տարի յառաջ քաղաքէս Կրպլուսի Ազգ. որբանոցը խըրկուած եւ մինչեւ ցարդ հոն խնամուող Մարաշեան Գալուստ եւ Յակոբ անուն երկու որբերու ազգականներն կը հրաւիրուին յԱզգ. խորհրդարան վերոյ յիշեալ որբերու մասին կարեւոր տեղեկութիւններ ստանալու համար։

Թաղական Խորհուրդ

Ս. Սարգիս Եկեղեցւոյ

Վառնայի

ԱԶԳԱՅԻՆ

Սարգսեանի մէջ կը կարգանք :

« Ս . Պատրիարքը կոնգրակ մը կը շրկէ առաջնորդական վիճակներէ և թեմերէ ոմանց , յորդորելով որ շարունակեն իրենց հաւատարմական և երախտագիտական (.) պարտականութիւնները անթերի կատարել շնորհապարտ մնալով այն շնորհաց (.) համար զորս կը վայելեն Օսմանեան պետութենէն , և յորդոր կը կարգացուի միշտ ազօթող ըլլալ մեր հայրախնամ (.) օգնատախառ Սուլթանին համար որ իր բոլոր հպատակաց բարօրութեան և երջանկութեան հոգ կը տանի : » (. . .)

ՍԱՄՍՈՆ Ի մէջ եկեղեցի մը և դպրոց մը շինելու արտօնագիրը Պատրիարքարանի յանձնուեր է :

ՎԵՀ . ԿԱԹՈՂԻԿՈՍԸ վերջին օրերս գացեր է Սանահնի վանքը :

ԵԴԻՊՏՈՍԻ օտարալեզու թերթերը մեծ գովեստով կը խօսին նկարիչ Տ . Վարդան Մախօթեանի ցուցադրած նկարներու մասին որոնք տաղանդաւոր նկարիչներու իսկ հիացում կազդեն եղեր :

— ՍԼԻՎԵՆԻ Տէր Վաղինակ քահանան առանց Պատրիարքարանի հաճութիւնը ստանալու Ռուսշուք մեկնած և Սլիվէնի թագ . Խորհրդոյ բողոքին և եկեղեցւոյ փակուելուն պատճառաւ տուած էր : Կրօն . Ժողովը նկատելով թէ Տէր Վաղինակ Սլիվէնի եկեղեցւոյ վրայ ձեռնադրուած ըլլալուն հակառակ , առանց կեդրոնի դիտութեան դացած է , որոշեց ազդարարել որ տեղը դառնայ անպատճառ :

ՊԻԼԵՃԻԿԻ առաջնորդ Տ . Մովսէս եպ . վերջնականապէս իր պաշտօնէն հրաժարած ըլլալով , կուզէ առաջնորդ չունեցող վիճակ մը երթալ հիւրաբար :

ՎԱՌՆԱՅԻ Տէր Սարգիս քահանան ստիպելով ըլլալով Սուրբ Վաղինակ , ըստ պատրիարքի հրամանին , այժմ տեղւոյս համար երկրորդ քահանայի մը պէտքը զգալի եղած է :

— ՊՈԼՍՈՅ Խաղաղիւն մէջ բնակող Միհրան Պէրպէրեանի կնոջ կրօնափոխ ըլլալը ստուգուելով կրօն . Ժողովը արտօնութիւն տուաւ Միհրանին որ կրկին ամուսնանայ ուրիշ մը հետ :

— ՌՈՒՍՉՈՒՔԷ « Տնէվնիք » կիմանայ թէ Միհրան Արթուրեան անունով հայ գործակատար մը 3 հակի համար վաճառացուցակ մը կը ներկայացնէ տեղւոյն մաքսատան , իսկ երբ պէտք եղած գործողութիւնները կը կատարուին եւ վաճառացուցակը (տէքլարացիա) կարճանագրուի միջերանացի տետրակին մէջ , հակերու թիւին վրայ վաճառացուցակին մէջ 3 մըն ալ կաւելցնէ , որով հակերու թիւը 33 ի կը բարձնայ : Սակայն երբ ապրանքները կառքը բեռցնել կը սկսի , մաքսատան դէտերը կասկածելով , ձերբակալել կուտան զանի :

ՎԷՍԷԼՈ Թատերախումբը երէկ Վառնա հասած ըլլալով , վաղը գեշեր ՍԱՆԴՐԱՆ սրահին մէջ իր առաջին ներկայացումը պիտի տայ , ընդ տնօրինութեամբ Տ . Պէնլեանի : Խումբը միայն տասը ներկայացումներ հոս տալէ յետոյ Շումլայի ճամբով Սօֆիա պիտի մեկնի :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Ձինուորական գործողութիւններն կարմիր ծովուն մէջ կը հաստատեն այն միտքը թէ Թորքիականներու միակ գործածութիւնը գիշեր ժամանակ է : Գիշեր ատեն կրնան առանց նշմարուելու մօտենալ հաւատարմորդներուն , եւ դիւ չնշմարուած կը մօտենան ականի հեռաւորութեան , որն որ կուղղուի թշնամոյ նաւին եւ կթէ անոր զպշի զայն կը փճացնէ : Գիշերային յարձակումը աւելի մեծ խուճապ յառաջ կը բերէ գիշեր ժամանակ , քան թէ ցօրեկ ժամանակ :

Ամեն մէկ Թորքիական 2-3 գործիք ունի ականի նետելու համար , եւ մէյ մէկ երկայն չափով թնդանօթ եւ 3-6 եւ աւելի փոքր թնդանօթներ :

Երբ 2 թշնամի Թորքիականներ կը պատահին իրարու , անոնք կրակ կը բանան ականի գործիքներէն եւ թնդանօթներէն : Թորքիականներու միջեւ կռիւ մըն է այդ : Այդ տեսակ կռիւի մը մէջ ընկղմեցաւ ուստիկան Թորքիական « Սթերեկաշնի » :

Նիւտ — Եօրքէն կը հաղորդեն թէ սոսկալի փոթորիկ մը Ձեքալօյի եւ չըջալից մէջ 500 տուններ աւերեց : Վընասները կը հասնին 205,000,000 ֆր . , 12 հոգի սպաննուած են եւ 20 հոգի վիրաւորուած : Փոթորիկը տեւեր է ընդ ամենը 2 վայրկեան :

Ռեզերսպուրիէն կը տեղեկացունեն որ ամբողջ Ռուսիոյ մէջ թէյի մեծ պահասութիւն կայ : Քանի մը վաճառականներ կը մտաբերեն Սէյլան կղզիէն թէյ ներածել , Այս ապրանքին պահասութեան պատճառաւ մեծ դժգոհութիւն կայ երկրին մէջ :

ՇԱՌՔԱՆԱԼՈՒԹԻՒՆ

Սօֆիայի նորակազմ երկսեռ երգեցիկ ընկերութեան առժամեայ մասնախումբը կուգայ յայտարարել տեղւոյս երկսեռ ազգայնոց թէ խորին շնորհակալութեամբ ընդունեց կիրակնօրեայ լսարանի առթիւ քանի մը Ազգային ներու նախաձեռնութեամբ հաւաքուած 32 . ֆրանքը .

Ի Դիմաց մասնախումբին
Աստուածաբան Աստուածաբան
Ե . Յովնանեան ան Մ . Յովնանեան
15 Մարտ 904
ՍՕՅԻԱ

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՒՄՍ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր .
« Բ . » [433 էջ] 2 ֆր .
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ
ՀԱՅԿԱԿՈՆ Երկրորդ անգամ տպագրուած եւ ճշգրտած . Գին 1 ֆր .

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլիարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութենէն առաջ . Գին 50 օսնգիւ

ՀԱՅԵՆԻԹԻ ՁԱՇԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն : Ձեզչեալ գին 1 ֆր .

Այս գրքերը ստանալու համար զիմել ՎԱՌՆԱ « Ի Ր Ա Ն Ք » ի խմբագրութեան

ՊՈՒԳՐԷՇ Տ . Օրնիկ Փափագեանի
և Տ . Յ . Պրպէրեանի
ԳՕՆՍՍԱՆՅԱ Տ . Արսակ Մէլիքեանի
ԳԱՀԻՐԷ Տ . Կարապետ Էրզնկացեանի
ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒՍ Տ . Ստեփան Մալմանեանի
ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ . Յակոբ Յրանդեանի
ՊՕՍԹՈՆ Տ . Ա . Ասքանազի
ՓՐՕՎԻՏԷՆՍ Տ . Մ . Տէր Պողոսեանի
ՖԻԶՊՈՒԿ Տ . Կ . Մարութեանի

ՄԱՐԴՈՒ ՍԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

[ԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՔԻ]

Առ Գիւմ Տիւն . . . :

Յիսուան անցած . բարձրահասակ , չափազանց ոսկրուտ , ներքնապէս ջգային ուժեղ կազմուածքով ժանգը կապած երկաթի մը գոյնն առած կերպարանքով , միջին ու քստմեկոյցի խորհրդաւորութիւն մը ծածկող աչքերով , որոնց լիկած ու շարաւուտ կոպերը լայն ճեղք մը ունին , ձարձրուած ու ախիւսառն մօրոքով խանձրած ու ազար կապած պիւներով , այլաճապօրէն սոսկում ազդող նայուածքով մը , կոճղի մը նմանող դուլիով մը , կնճիւղներով լի ճակատով եւ մարմնացած ուրուականի մը երեւոյթով մէկն էր ան :

Հագած էր հին , թխադոյն շալիսիւն ու կարկըտուած տափատ մը , որ մինչեւ ծունկերը ծածկած էր , վրան առած էր երկայն ու պատու պատու եղած քուրջ մը , որուն չինք կրնար վերարկու բսել . ոտքերը ցնցոտիներու մէջ փաթկած էր՝ կաշիի կտորով մը կապկպած . իսկ վրէժը գտակ մը դրած էր որուն ապականութիւնը նայողին սարսուռ կուտար :

Երկայն ու ձողի մը նմանող փայտ մը առած էր թիւի վրայ , որմէ կախած էր հոգէ պուտուկ մը :

Ու ամբողջ օրը կը քայլէր , կը թափառէր ու

չուրջը գտնուած մարդերուն ու մանուկներուն կը նայէր :

Չախարի , — ու այս էր իր անունը , — կեցած ցած տեղէն պահ մը նայուածքը կը նետէր իրեն ձայնողներուն վրայ , կը սարսուռ , կը թողար ու գլուխը շարժելով կը շարունակէր իր ձայնին :

— Չախարի , Չախարի . . . կը մրմնջէին կիները : Ան ատեն կը զայրանար ու կը բացագանչէր :
— Ո՛հ , ո՛հ . . .

Հետաքրքրուած էի . Շատերուն՝ անոր մասին հարցումներ ըրի , բայց տեղեկութիւնները չափազանց հակասական ու միանգամայն միջին հանգամանք մը ունէին :

Ի՞նչ ընէի . . .

Ըսին իմի թէ՛ ուղեղային տկարութիւն մը ունէր եւ անոր հետ առանձին խօսիլը վտանգաւոր էր որովհետեւ յանկարծ խենթութիւն մը կուգար վրան ու կը կորսնցունէր ինքզինքը :

Այս տխուր երեւոյթը կաշկանդեց զիս իմ մտադրութեանցս մէջ ու չը համարձակեցայ երկար ամիսներ անոր մօտենալ , սակայն շարունակ սրտէս աւրիւն կերթար այդ եղբրական վիճակը տեսնելով :

Անցած էին քանի մը ամիսներ . . .

Գիշեր մը նոր վարձած սենեակս պատուհանը նըստած էի . Ժամը 10ին մօտ էր , յանկարծ տխուր , սրտառուջ ու աղբիւկ երգի մը ձայնը յուղեց զիս : Հարցուցի կնոջս :

— Ո՛ւսկից է այս ձայնը :

— Չը գիտե՞ս , Ժպտեցաւ ան . մեր դիմացը կը բնակի Չախարին :

— Թաղապետութեան շէնքին մէջ :

— Այո՛ :

— Յատուկ սենեակ մը առած են իրեն :

— Ո՛չ , հոն ախոս մը կայ , ուր աղբակիր կառքերու ձիերը կը պահպանուին . Չախարի անոնց հետ կապի : Ա՛յ աւելից հաքը գործ ունինք : Ամեն գիշեր ասանկ է . ոչ քուն ունի , ոչ դադար . շարունակ կերգէ : Բայց թէ ի՞նչ է երգածը . ո՛չ պուլկարներէն է եւ ո՛չ ալ ուրիշ լեզու մը , բերնին եւ կածը դուրս կուտայ : Եւ որովհետեւ ձայնն անուշ է եղանակներն անտանելի պիտի չըլլան քեզի , ա՛նանկ չէ՞ :

— Տարաբա՛ղդ մարդ . . . մրմնջեցի եւ ու խորապէս խռովուած՝ մտիկ ըրի իր մեղամաղձոտ երգին : Բայց զարմանալի եղաւ , երբ քառորդէ մը ետքը թողուց հագն ու սկսաւ բացագանչել :

— Հէ՛ , հէ՛ , հէ՛ . . . ի՛նչ , ի՛նչ . . . մէ՛ է՛ է՛ . . .

— Ինչո՞ւ ասանկ կընէ , հարցուցի կնոջս :

ԼԷՌԵՆՑ

(Շարունակելի)

Սյիշխարհէ Կ. Արթուրի Մինասեան
Շումշաս » Յովհաննէս Քէօսէեան
Տօպրիշէ » Նիկողոս Սիսակեան
Պուրպագս » Արտաշէս Հարեմց
Սոփաս » Ասատուր Մկրտչեան
Բօքսթիճէ » Սիսակ Մէլիքեան

— Իսլահաթ խոստումներն ա Պապը Ալինին Մարտ 8 թարիխին ճէվապնամէսի թէքբաւ էննէպի զապիթլէրին մըգտարը էյսիլթմէք իսթէփշ օլմաշլէ էլլիլէր եինէ Պապը Ալիյէ դաթի պիր միւրթաճաթ իտէճէքիւր : Պու խու-

— Սթանպոլտան թանաւ եազըլ-
տըըը իւզըէ, Մաքէթոնիա ժան-
տարմա թէշքիլաթը խոստըն-
տա ֆրանսըզ էլլիսի աւստրո-
բուռ թալէպէրինի Պապը Ալիէ
թէէքիտ իտէրէք, գապուլ էյ-
լէմէսինի շէտիտէն իտտաա իթ-
մի, տիր :


«Պիղլիմ Թորբիլէօրլէր աիւշմա-
նըն 6 Թորբիլէօրլէրի իպէրինէ
չտօրտէն աթէչէ պաշլարորլար»

— Կէշէն հաֆթա Բօրթ Լը-
թուր իւզէրինէ օլընան հիւճու-
էննասընտա հավայա աթըլան
վաթօր Պօյան օլմայուպ , տիկէր
պիրինճի սընըֆ պիր քուա-
ղէօք ըմըշ . թայֆէլէր 128 քիշի
թէլէֆ օլուզլարը Բէթէրսպուր
տան պիտիբրիլյօր :

— Ֆէրաւ . Բրէնս հաղթեթէ-
րի Մանթրոնտա խափա պուր-
նան միւսիննէ վախիտէսի Բրէն-
սէս Գլէւանթինին նիզոտինէ կիթ-
մէք իշխուն 4 կիւն մուգատտէմ
Սօջիւտան հարէքթ իթիշլէլ
տիր Բրէնս՝ իշխանա թարիդի-
լէլ կիթմիշ խէտէ , պու թարի-
դի ինթիւսայ իթմէսինէ սիւս-

կա ներեր (ի դերերնտե) պեր թագած
երգէ կէ դը մէթէպրերն ջուպը
տաճիւն քերութէ գարը ետթիպը
տաղըտը քէն, քէոյրէլէրտն տէ
կրէլթիւլէրթէ, ճարտն պտտէրտաթը աշ-
մըն ուրա պրէ մէթէպրէ դըլ տըրտէթ
օրնմըն տըր

Ներկայացուցիչ Ն. ՆԵՏՔՈՎ



печатница "Взаимность," — Варна,